ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 158-Ա

ք. Երևան

«ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 28-ին դիմումի հիման վրա հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց*.

2025 թվականի նոյեմբերի 28-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) դիմումում նշված է «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր) կողմից առանց համապատասխան իրավական հիմքերի՝ պայմանագրերի, տեսալսողական ծրագրերի վերահաղորդելու փաստի վերաբերյալ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա կետով, 2025 թվականի նոյեմբերի 28-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է թիվ 10 վարչական վարույթը:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը դիմումով հայտնել է, որ «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերությունը NETX (https://www.netx.am/) ապրանքային նշանի ներքո, ըստ իր կայքի տվյալների, հեռարձակում է ավելի քան 170 տեսալսողական ծրագիր, որոնց թվում 12-ը՝ Eurosport 1, Eurosport 2, Animal planet, Discovery Channel, НТВ сериал, Моя планета, Наука 2 (Наука), Звезда (Звезда HD), Россия 24, Россия К, НТВ Мир և Мульт, իրականացնում է ապօրինի, քանի որ դրանց վերահեռարձակման իրավունքը տրամադրելու իրավասությունը պատկանում է Ընկերությանը:

Ընկերությունը խնդրել է նաև ցանցային օպերատորի կայքում նշված տեսալսողական ծրագրերը համադրել վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված հեռարձակվող տեսալսողական ծրագրերի հետ և հարուցել վարչական վարույթ ցանցային օպերատորի նկատմամբ: Դիմումին կից ներկայացվել է 12 լուսանկար համապատասխան ծրագրերի վերաբերյալ:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչությունը, հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 63-Ա հրամանը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, 2025 թվականի դեկտեմբերի 01-ին ցանցային օպերատորի մոտ իրականացրել է մշտադիտարկում՝ տեղում դիտարկման միջոցով, որի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 01-ին կազմվել է օպերատորների գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ նաև՝ Արձանագրություն):

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունը ցանցային օպերատորի մոտ տեղում դիտարկում

իրականացնելու դեպքում ստորագրում են կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:

Օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ եթե օպերատորի ղեկավարը կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը տեղում դիտարկման վայրում չէ, ապա արձանագրության երկրորդ օրինակն առաքվում է փոստով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցային օպերատորի ներկայացուցիչը տեղում դիտարկման պահին ներկա չի գտնվել, կազմված Արձանագրության երկրորդ օրինակը Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ Ե/03/03.1/967-25 գրությամբ առաքվել է «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերությանը:

Օրենքի 42-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Հեռարձակողը կամ օպերատորը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել կարգավորող պետական մարմին: Ցանցային օպերատորը չի օգտվել այս իրավունքից և որևէ առարկություն չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ Ե/04/04.1/961-25 գրությամբ ծանուցել է հարուցված վարչական վարույթի վերաբերյալ: Իսկ 2025 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ Ե/04/04.1/973-25 գրությամբ առաջարկվել է ներկայացնել տեղում դիտարկման արդյունքում արձանագրված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև այս հարցի շուրջ պարզաբանումներ և բացատրություններ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ Ե/04/04.1/962-25 գրությամբ տեղեկացրել է նաև Ընկերությանը:

Ցանցային օպերատորը 2025 թվականի դեկտեմբերի 07-ին հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ներկայացրել է պարզաբանումներ և բացատրություններ, ինչպես նաև կցել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ամբողջական ցանկը առ 01 դեկտեմբերի 2025թ. դրությամբ:

Ցանցային օպերատորն իր պարզաբանումներում նշել է՝

««Ֆոր Յունիթի» ՍՊ ընկերությունը Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից ս/թ հուլիսի 23-ին ստացել է ցանցային օպերատորի գործունեության թիվ 369 լիցենզիան:

2025 թվականի հոկտեմբերի 14-ին գրավոր իրազեկել ենք Հանձնաժողովին՝ դրան հաջորդող 3-5 օրերի ընթացքում ցանցային օպերատորի գործունեությունը սկսելու վերաբերյալ:

Այդ պահի դրությամբ և մինչ այս պահը մեր գրասենյակում թեսթավորում ենք տարբեր հեռուստաալիքներ՝ հետագայում մեզ նպատակահարմար հեռուստաալիքների իրավատերերի հետ վերահեռարձակման իրավունք ստանալու և վերահեռարձակումն իրականացնելու համար: Որոշ իրավատերերի հետ արդեն ձեռք ենք բերել համաձայնություններ, իսկ որոշների հետ այս պահի դրությամբ բանակցում ենք իրավունքի ձեռքբերման շուրջ:

Մեր ընկերությունը իր բաժանորդներին վերահեռարձակում է բացառապես այն հեռուստաալիքները, որոնց համար ունի իրավական հիմք /կցվում է/, իսկ մնացած հեռուստաալիքները, որոնք մեր ընկերության գրասենյակում են ցուցադրվում՝ բացառապես թեսթային են հենց ընկերության համար:

Հաշվի առնելով, որ մենք նոր ենք սկսել մեր գործունեությունը և վերը նշված արգումենտները՝ խնդրում ենք կարճել նախաձեռնված վարչական վարույթը և օբյեկտիվորեն տալ ժամանակ, որպեսզի ընկերությունը հնարավորություն ունենա կայացնել որոշում՝ մոտ ապագայում վերահեռարձակման ենթակա հեռուստաալիքների ցանկի շուրջ և ավարտին հասցնի ընթացող բանակցությունները դրանց իրավատերերի հետ ու ձեռք բերի դրանց իրավական հիմքերը:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ, 9-րդ և 11-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը սահմանում են.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

ցանցային օպերատորը տեսալսողական ծրագրերը վերահաղորդելիս պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության վկայակոչված պահանջները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ ցանցային օպերատորը 2025 թվականի հուլիսի 24-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ՝ սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ԿՀ N 369, գործողության ժամկետը՝ 24.07.2025թ.- 24.07.2035թ.:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ ցանցային օպերատորն, ի թիվս այլնի, պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար: Ավելին, վերջինս պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ օրենսդրական պահանջները չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ:

Տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

«ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերությունում 2025 թվականի դեկտեմբերի 01-ին ժամը 15:00-ից 16:10-ն ընկած ժամանակահատվածում իրականացված տեղում դիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվել են թվով 173 տեսալսողական ծրագրեր՝ «Շանթ Premium», «8-ой канал», «Հ2», «Շանթ Գյումրի», «НТВ Мир», «Ազատություն TV», «ABN», «5 պլյուս», «Россия 24», «НТВ», «РБК», «РЕН ТВ», «5-ый канал», «Мир 24», «Домашний», «Че!», «ТНТ 4», «СТС», «Пятница! Int.», «Թավա TV», «Кухня», «Big planet», «Terra», «Fashion TV», «Nat Geo Wild», «travel + adventure», «Լայֆհաք», «Da Vinci», «Кто етсь кто», «National Geographic», «ТНТ», «Охотник и Рыболов», «История», «Т 24», «History», «Viju Explore», «Viju + planet», «Bridge deluxe», «Velari», «Հայ TV», «Ֆիթնես», «Bridge Русский хит», «Bridge Hits», «ТНТ music», «Amedia Hit», «RU TV», «Mezzo», «Live музыка», «Шансон ТВ», «Կինոման», «Кинопремьера», «Кинохит», «Киносвидание», «Киномикс», «Киносемья», «Мужское кино», «Viju TV 1000 action», «Viju TV 1000», «Viju TV 1000 русское», «.red», «.sci-fi», «TV3», «Звезда», «ТНТ HD», «Наше новое кино», «Սինեման», «МСМ Top», «Кинокомедия», «Viju + megahit», «viju + comedy», «viju + prmiere», «Բազմոց TV», «Русский детектив», «Amedia Premium», «Киноужас», «.black», «Amedia 2», «Мир сериала», «НТВ сериал», «Bollywood HD», «Индийское кино», «Индия», «Кинеко», «Живи», «Flix Snip», «Дом кино», «Խաղալիք», «Nicelodeon», «Мультиландия», «Мульт», «BARI», «Kino», «Premium ArmeniaTV», «Տունտունիկ», «Ջան TV», «Քոմեդի», «Հայկինո», «viju + serial», «Экспресс», «Футбол 1», «Футбол 2», «Футбол 3», «Конный мир», «Загородная жизнь», «Боец», «Победа», «Любимое кино», «Детский мир», «Солнце», «2Х2», «Ani», «Cartoon classics», «viju Nature», «Start World», «Start Air», «Gagsnetwork», «Охота и рыбалка», «Zoo Парк», «Живая планета», «Поехали!», «#кто куда», «Наука», «Моя планета», «Ю», «Перец», «Матч!Страна», «Сарафан», «BBC», «Глазами туриста», «Живая природа», «RTG HD», «Shop & Show», «Ностальгия», «Мама», «Музыка первого», «Союз», «Top secret», «Золотая Коллекция», «Большая Азия», «КВН», «Тайны галактики», «НТВ стиль», «НТВ право», «СТС kids», «О!2», «МУЗ», «Мульт и музтыка», «НТВ Хит», «СТС LOVE», «Ювелирочка», «Авто 24», «Comedy Central», «Футбол», «Матч Премьер», «Матч», «KHL Prime», «Viju+sport», «Fast sports 1», «Fast sports 2», «Նոյյան Տապան», «Eurosport 1», «Eurosport 2», «Бокс ТВ», «365», «Star cinema», «Cinema», «Русский Роман», «Русский Бестселлер», «Родное кино», «Star Family» և «Теле Кафе»:

Հանձնաժողովն ուսումնասիրել է ցանցային օպերատորի ներկայացրած պարզաբանումները և դրան կից փաստաթղթերը: Մասնավորապես, ըստ պարզաբանումների, ցանցային օպերատորը

1. հայտնել է, որ 14.10.2025թ-ից սկսել է իր գործունեությունը և այդ ժամկետից մինչ այս պահը թեսթավորում է տարբեր տեսալսողական ծրագրեր հետագայում իրեն նպատակահարմար ծրագրերի իրավատերերից վերահաղորդման իրավունք ստանալու և վերահաղորդում իրականացնելու համար:

2. Միաժամանակ տեղեկացրել է, որ վերահաղորդում է բացառապես այն տեսալսողական ծրագրերը, որոնց համար ունի իրավական հիմք, իսկ մնացած տեսալսողական ծրագրերը, որոնք վերահաղորդվում են, բացառապես թեսթային են:

Հանձնաժողովն իրականացրել է Արձանագրությունում նշված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից ներկայացված ամբողջական ցանկի (այսուհետ՝ Ցանկ, որն ընդգրկում է 74 տեսալսողական ծրագիր) համադրություն: Համադրման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորը, ըստ Արձանագրության, փաստացի վերահաղորդել է 173 տեսալսողական ծրագիր, որոնցից Ցանկում ներառված են միայն 20-ը՝ «Big planet», «National Geographic», «Amedia Hit», «Кинопремьера», «Кинохит», «Киносвидание», «Киномикс», «Киносемья», «Мужское кино», «Наше новое кино», «Кинокомедия», «Киноужас», «Amedia 2», «Индийское кино», «Индия», «Дом кино», «Загородная жизнь», «Победа», «Музыка первого» և «Родное кино»:

Ավելին, Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ 12 տեսալսողական ծրագրերից, որոնց վերահաղորդման իրավունքը տրամադրելու իրավասությունը պատկանում է Ընկերությանը, ցանցային օպերատորը չի վերահաղորդել միայն հետևյալ 3 տեսալսողական ծրագիրը՝ «Animal Planet», «Discovery Channel» և «Россия К»:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի *առանց իրավական հիմքի՝ պայմանագրերի*, վերահաղորդվել են թվով 153 տեսալսողական ծրագրեր՝ «Շանթ Premium», «8-ой канал», «Հ2», «Շանթ Գյումրի», «НТВ Мир», «Ազատություն TV», «ABN», «5 պլյուս», «Россия 24», «НТВ», «РБК», «РЕН ТВ», «5-ый канал», «Мир 24», «Домашний», «Че!», «ТНТ 4», «СТС», «Пятница! Int.», «Թավա TV», «Кухня», «Terra», «Fashion TV», «Nat Geo Wild», «travel + adventure», «Լայֆhաք», «Da Vinci», «Кто етсь кто», «ТНТ», «Охотник и Рыболов», «История», «Т 24», «History», «Viju Explore», «Viju + planet», «Bridge deluxe», «Velari», «Հայ TV», «Ֆիթնես», «Bridge Русский хит», «Bridge Hits», «ТНТ music», «RU TV», «Mezzo», «Live музыка», «Шансон ТВ», «Կինոման», «Viju TV 1000 action», «Viju TV 1000», «Viju TV 1000 русское», «.red», «.sci-fi», «TV3», «Звезда», «ТНТ HD», «Սինեման», «MCM Top», «Viju + megahit», «viju + comedy», «viju + prmiere», «Բազմng TV», «Русский детектив», «Amedia Premium», «.black», «Мир сериала», «НТВ сериал», «Bollywood HD», «Кинеко», «Живи», «Flix Snip», «Խաղալիք», «Nicelodeon», «Мультиландия», «Мульт», «BARI», «Kino», «Premium ArmeniaTV», «Տունտունիկ», «Ջան TV», «Քոմեդի», «Հայկինո», «viju + serial», «Экспресс», «Футбол 1», «Футбол 2», «Футбол 3», «Конный мир», «Боец», «Любимое кино», «Детский мир», «Солнце», «2Х2», «Ani», «Cartoon classics», «viju Nature», «Start World», «Start Air», «Gagsnetwork», «Охота и рыбалка», «Zoo Парк», «Живая планета», «Поехали!», «#кто куда», «Наука», «Моя планета», «Ю», «Перец», «Матч!Страна», «Сарафан», «BBC», «Глазами туриста», «Живая природа», «RTG HD», «Shop & Show», «Ностальгия», «Мама», «Союз», «Top secret», «Золотая Коллекция», «Большая Азия», «КВН», «Тайны галактики», «НТВ стиль», «НТВ право», «СТС kids», «О!2», «МУЗ», «Мульт и музтыка», «НТВ Хит», «СТС LOVE», «Ювелирочка», «Авто 24», «Comedy Central», «Футбол», «Матч Премьер», «Матч», «KHL Prime», «Viju+sport», «Fast sports 1», «Fast sports 2», «Նոյյան Տապան», «Eurosport 1», «Eurosport 2», «Бокс ТВ», «365», «Star cinema», «Cinema», «Русский Роман», «Русский Бестселлер», «Star Family» և «Теле Кафе»:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ցանցային օպերատորի ներկայացրած պարզաբանումները և կից փաստաթղթերը բավարար հիմք չեն կարող հանդիսանալ

Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և ցանցային օպերատորի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը ևս մեկ անգամ արձանագրում է, որ ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը վերահաղորդել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ և 11-րդ մասերը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 65-րդ հոդվածի 1-ին մասերը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 26
ք. Երևան